

ՎԱՋԳԵՆ ՆԱՄԱՐԱՐՁՈՒՄՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

ԼԱՏԻՆԱԲԱՆ ՆԱՅԵՐԵՆԻ ՆԱՐՅՈՒ ՆԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Լատինաբան հայերենի պարամությունն ամբողջացնելու համար անհրաժեշտ է առանձին-առանձին անդրադառնալ հայերենագիտական այն աշխատություններին, որոնցում այս կամ այն չափով շոշափվում են լատինաբանության, առհասարակ հայ-լատինական հարաբերությունների հարցերը: Բայց հայերենագետներն այդ հարցերին անդրադարձել են հարեւանացի քննությամբ: Մեզանում նման ուսումնասիրություններ երևան են եկել ԺԹ-Ի դարերի հայ պարբերական մամուլի էջերում, քերականական աշխատություններում, հեկա-գայում նաև առանձին մենագրություններում:

Եւ որքան գալիս ենք դեպի մեր ժամանակները, լատինաբանության գնահատությունը դրվում է որոշակի հիմքերի վրա, արժանանում ավելի լայն ուշադրության: Այդ իրողությունը պարզառաքանվում է նրանով, որ գիտության զարգացման ընթացքում փոխվում, ճշգրտվում են ուսումնասիրությունների մեթոդաբանական հիմունքները, ընդլայնվում երևույթի գնահատության արեսական-իմացաբանական կողմը:

Նկատի ունենալով հիշյալ հանգամանքները՝ լատինաբան հայերենին եւ առհասարակ լատինաբանության գնահատության անդրադարձած կարեւորագույն աշխատություններն այսօրեղ քննարկում ենք ժամանակագրորեն՝ կապված հարցի պարամության երկու փուլերի հեկ (ԺԹ դարի վերջերից մինչեւ Ի դարի երկրորդ րասնամյակը, այնուհետեւ՝ մինչեւ մեր օրերը), նաև իմացաբանորեն՝ երևույթի գնահատման որակական կողմի առնչությամբ (այս կամ այն հարցի գնահատությունը որքանով է առաջ անցնում նախկինում եղածներից):

Լատինաբան հայերենի եւ լատինապիս քերականությունների պարամության մեջ շրջադարձային է Միքայել Չամչյանի (1729-1823 թթ.) քերականական աշխատությունը¹: Նեղինակը, ինչպես իրավամբ նշում է Գ. Ջահուկյանը, մեզանում առաջինն է, «որ գրաբարի քերականությունը վերջնականապես ազարեց հունաբանության եւ լատինաբանության բացասական ավանդույթներից, քերականության մեջ մուծված արեւելական «բարեփոխումներին» հակադրեց հին րերսրերի անկանխակալ ուսումնասիրության ու մարենագրական վկայությունների վրա հիմնված քերականական կանոններն ու բացարթությունները»²:

Չամչյանը լատինաբանության հարցերին րեսականորեն անդրադառնում է իր քերականության «Առաջաբանության» մեջ (էջ Գ-Ժ): Այսօրեղ համառոտակի նշվում են «հունական ոճով» գրված այն քերականությունները, որոնցում առկա են խորորումներ բուն հայերենից: Խոսվում է Մխիթար Մեբասրացու քերականության մասին, որ հեղինակը մրադիր է եղել մաքրել հայերենը խորություններից, բայց մասամբ է կարողացել իրականացնել:

1 «Քերականութիւն հայկազեան լեզուի», յօրինալ ըստ նախնի ուղղախօսության ի Միքայել Չամչեանց, Վենեպիկ, 1779:

2 Գ. Ջահուկյան, Գրաբարի քերականության պարամություն, Եր., 1974, էջ 303:

Շեշտվում է, որ Մխիթարը հրահանգել է հեղափոխում այդ հարցում ավելի արմատական վերաբերմունք ունենալ, այն է՝ ամբողջապես մաքրել հայերենն ամեն կարգի անհարիր ձևերից: Վերջինս ըստ էության իրագործվում է Մխիթարի աշակերպների ձեռքով, այնուհետև ձևակերպվում Չամչյանի քերականությամբ: Չամչյանը ներածականում ավելի մանրամասն է նշում լարինաբան այն խրթին ու անհարիր ձևերը, որոնցով խճողված է եղել հայերենը:

Լարինաբանության հաղթահարման գործում որոշակի ավանդ ունի Գաբրիել Ավերիբյանը (1751-1827 թթ.): Դա ակնառու է նրա քերականական և բառարանագրական, այլև բանասիրական աշխատանքներում: Նա այս հարցում դիմել է գործնական քայլերի. իր քերականության մեջ³, անդրադառնալով հայ և օտար քերականների արածի սեղմ բնութագրմանն ու գնահատությանը, Ավերիբյանը չի խորշում լարինաբան քերականների աշխատությունները մեկ-երկու խոսքով ներկայացնելուց: Այսպես, «նոր հեղինակներից» նա անդրադառնում է նաև Փրանցիսկուս Ռիվոլայի, Կոնստանտին Գալանտսի, Ռսկան Երեանցու, Նովիսնին (Նովով) Կոստանդնուպոլսեցու, Խաչատուր Էրզրումեցու, Նակոբ Վիլյամի, Մխիթար Սեբաստացու քերականություններին, որոնք, ինչպես գիտենք, այս կամ այն չափով քորք էին քալիս ժամանակի լարինաբանությանը:

Մեսրոպը Տեր-Նարությունյանին իր քերականության⁴ առաջարկում, Գ. Ավերիբյանի նման, քալիս է մի շարք օտար և հայ քերականների աշխատությունների սեղմ պատմությունը, որտեղ հայ քերականներից ուշադրության են արժանանում հարկապես նրանք, որոնք իրենց քերականագիտական հայացքները ձևակերպել են բուն հայերենի նյութի հիման վրա և կազմել «հայեցի» քերականություններ: Ըստ այդմ, ի թիվս այլ հեղինակների, ակնարկային գնահատության են արժանանում Ռսկան Երեանցին («համառօտ քերականութիւն իմն ըստ լարին ոճոյ պակեաց յԱմստերդամ» - էջ ԻԵ), Յոհան Զրյոդերը, Մխիթար Սեբաստացին («շարադրեաց գերականութիւն իմն ըստ ոճոյ նորոց» - էջ ԻԶ), Միքայել Չամչյանը («ըստ ուղիղ հայկաբանութեան անդրացոյց գերականութիւն իմն», այլև՝ «սորայս քերականութիւն գերազանցեցաւ զբազմացն առաջնոց»): Վերջում Տեր-Նարությունյանը նշում է հետևյալ միակողմանի, բայց բավականին ուշագրավ միտքը. «Գրանին յագգի մերում այլ ևս զանազան հեղինակք արհեստիս քերականութեան, յորոց ոմանք արքաքոյ հայկաբանութեան գոյով իսպառ անօգուտ են, և այլք ոչ այնքան հրապարակեալ գոյով զանց արարաք նշանակել աստանօր» (էջ ԻԶ):

Տայերենագիտական աշխատանքները ԺԹ դ. 20–30-ական թթ. հետո կարարվում են բոլորովին այլ մոտեցմամբ:

Տայերենը դառնում է ոչ այնքան բանասիրական-քերականական, որքան լեզվաբանական, մանավանդ համեմատական ուսումնասիրության առարկա: Նախկին Վենետիկի Մխիթարյանների օգնությամբ հայերենին ծանոթ եղած կամ այն փորապնդելու աստիճան սովորած եւրոպացի լեզվաբանները (Տայերիս Պերերման, Պոլ դը Լագարդ և ուրիշներ) զբաղվում են ոչ միայն հայերեն աստվածաբանական, կրոնական եզրերի և պատմագ-

3 «Քերականութիւն հայկական, նորոգ քննութեամբ և կարգաւ» աշխատասիրեալ Գաբրիելի Ավերիբեան, Վենետիկ, 1815, էջ 151–162:

4 «Քերականութիւն հայոց լեզուի, նորոգ քննութեամբ» յօրինեալ Արզրումեցի Տեր-Յարութիւնեան Տեր Մեսրոպ, Կ. Պոլիս, 1826:

բական բնագրերի ուսումնասիրությամբ՝ դրանց մի մասը թարգմանելով և հրատարակելով եւրոպական նոր լեզուներով, այլև համեմատական քերականության հիմքերն են դնում կամ նախապարաստում՝ նյութ ունենալով հայերենի հնչյունական, բառային և ձևաբանական առանձնահատկությունները:

Նիշենք, որ 1830-ական թթ. լույս էր տեսել «Նոր հայկազյան բառարանը» (հ. 1-2, Վենետիկ, 1836-1837), որն անսպառ նյութ պարունակելով հայերենի հին շրջանի բառապաշարի վերաբերյալ՝ դառնում է համեմատական լեզվաբանությամբ զբաղվող հայերենագետների հետազոտությունների աղբյուրը: Մխիթարյաններն իրենք էին ջանացել բառարանում որոշակի տեղ տալ բառերի ծագման կամ «ստուգաբանության» հարցին՝ բանասիրական վերլուծության տախտակներում, և դա ոչ միայն օգնում էր եւրոպացի հայագետներին գիտական համեմատական սկզբունքներով մոտենալու հայերենի փաստերին, այլև դրանք համեմատելու այլ լեզուների փոխաների հետ:

Նայոց լեզվի համեմատական ուսումնասիրության սկզբնավորումով մի տեսակ երկբորդական են դառնում այն աշխատանքները, որոնք կարող էին կատարվել նախորդ ժամանակներից եկող սկզբունքներով ու մոտեցումներով: Այս առումով լատինաբան հայերենը դառնում է ոչ կարևոր տարբերակ, իսկ բուն կամ «հայկաբան» լեզուն՝ առաջնային: Առաջ մղողները մեզանում եղել են Մխիթարյանները՝ իրենց երկու թեմով, որոնց գիտական-բանասիրական ողջ ձեռքբերումը դառնում է պատմահամեմատական լեզվաբանության ուշադրության առարկա: Նույնությամբ լեզուների ցեղակցության որոշակի խնդիրներ տարբեր կարգի լուծումներ են ստանում թե՛ մյուս լեզուների և թե՛ հայերենի ընձեռած փոխաների օգտագործմամբ: Հայերենը համեմատության եզր է դառնում իր հին գրական՝ գրաբար տարբերակով, այսինքն՝ մյուս տարբերակները, մանավանդ օտար ազդեցության արդյունք հանդիսացողները, մի տեսակ չեն դառնում հատուկ ուշադրության առարկա:

Եւ միանգամայն բնական է, որ լատինաբան հայերենը պիտի դուրս մնար նման ուսումնասիրությունների շրջանակից: Լատինաբան հայերենի պատմությանն անդրադառնում են ավելի ուշ՝ բանասիրական, քերականագիտական և լեզվի ընդհանուր պատմությանը նվիրված աշխատանքներում (Ներսես Ալիկյան, Տրաչյա Աճառյան, Է. Աղայան, Գ. Զահուկյան և ուրիշներ):

Այդուհանդերձ, ԺԹ դ. առաջին կեսին և հետագայում ևս երևան են գալիս այլ բնույթի աշխատություններ՝ քերականություններ, բանասիրական, լեզվաբանական հոդվածներ և այլն, որոնցում ինչ-ինչ նպատակով և տարբեր չափերով քննարկվում են նաև լատինաբան հայերենին վերաբերող մասնավոր իրողություններ:

Լատինաբանության հարցին անդրադառնում է նաև Ն. Արսեն Բագրատունին (1841 – 1911 թթ.) իր գիտական հոդվածներից երկուսում, նաև հայրնի քերականության վերջաբանում⁵: Ամենից առաջ կուզենայինք նշել, որ Բագրատունու հայացքները, ինչպես ճիշտ է նկարված, առհասարակ կազմում են «բանասիրական ժամանակագրի շրջանի»⁶ վառ արքա-

5 Ա. Բագրատունի, Նորահար բառերու վրայ. «Բազմավեպ», 1845, էջ 267-271: Նույնի «Հայերեն գրաբար լեզուի յավութեան վրայ», ն. տ., 1846, էջ 196-204, Նույնի, «Հայերեն քերականութիւն ի պէտս զարգացողոց», Վենետիկ, 1852, էջ 628-632:

6 Տե՛ս Էդ. Աղայան, Գրաբարի պատմության շրջանաբաժանումը. «Բանբեր Երեսնի համալսարանի», 1974, թ. 2, էջ 59-60:

հայրությունը, որն իր դրսևորումն ունի նաև լարինաբանության գնահատության հարցում: Ըստ այդմ Բագրապունին գրում է, որ ԺԴ-ԺԹ դարերի գրաբարն իր փառքեր դրսևորումներով ներկայացնում է անկումը «ոսկե» (Ե-ԺԹ դդ.), «արծաթե» (Է-ԺԳ դդ.) և «պղնձե» (ԺԳ դ.) որակումներ ստացած հայերեն վիճակների: Մեծանուն հայկաբանը հիշյալ երեւոյթին փայլի է միանման գնահատություն:

Քերականության վերջաբանում նշվում է. «Յաջորդեն դարք երկաթի, խնցի և վարթաբազոյն եւս, զորս չէ իսկ արժան հեղինակս եւ առաջնորդս ասել լեզուիս: Թէպէր եւ գրանին ի նոսա ոմանք յոյժ չափաւորապէս հեղեղոյք նախնեաց, սակայն ոչ ելանեն ի վեր քան զոճ պղնձի դարուն: Ի չորեքրասան երկաթի դարուն սկսանի ապականութիւն բարբառոյս յանուանեալ Միաբարաց անպի, ի Յովհաննէ Բռնեցոյ, ի Ներսիսէ Պալինեց եւ ի Յակոբայ թարգմանէ յաշակերպաց Բարթողիմէի քարոզչի: Իսկ յերին թանձր եւ խոր պոծութիւն հայացի խօսից փոխելոյ ամենեւին յոճ լարինական յանճոռնի եւ յանհեղեղ՝ նորաստեղծ խոժաղոժ բայիք եւ բառիք հանդերձ, եմուր կալաւ ի մերսն մօտ ի կէս եւթնևսրասն դարու: Որոց գլխաւոր հարք համարելի են Պաղոս Փիրոմալ՝ քարոզիչ որպէս զԲարթողիմէոսն, Ստեփանոս Լեոպոլսեցի կամ Լեհացի եւ Ոսկան վարդապետ: Ապա եւ յօրէնս իսկ կարգեցաւ այն ոճ այլաբարազ եւ այլազգացի, եւ քերականութիւն եւս յօրինեցաւ ի Յովհաննէ Յակոբայ Նոյովէ եւ յազգաբարեաց եւ յազգութեաց փրբ Բարսէլ յեր կիսոյ եւթնևսրասն դարին: Ի սոցանէ վնասակար քան զամենեւեան հաշուելի է Ոսկան վարդապետ, որոյ աղաւաղ փապգրութիւնք Աստուածաշունչ մարենին եւ եկեղեցական գրեւոյն անցեալ ի բերանս ամենեցուն, եւ ապա ի ճաշոցն եւս դրոշմեալ, խանգարեաց եւ խանգարէ ցարդ եւս զլեզուն ի միպս եւ ի գրիչս բազմաց, որ սովորութեամբ ի նոյն ընդելեալքն են: Եւ թէպէր Աստուածաշունչ մարենան փապգրեալ յերոյ ի մէնջ ըստ նախնեաց՝ դարման եղև ոչ սակաւ բժշկութեան կաւոր այսր վիրաց, բայց այլոց եկեղեցական գրեանցն ցարդ եւս փեւէ ոչ սակաւ եղծումն եւ փոխեղծութիւն՝ իբրեւ ի սովորոյթ դարձեալ: Եւ ճաշոցն ցորչափ ընթերնու հանապազօր յեկեղեցիս եւ յարեանս ըստ ոսկանեան աղճափանացն, անհնար է սպառնալու արմարաքի խլել ախարի ապականութեանն» (Էջ 632): Նախվաճը, որը բերեցինք ամբողջությամբ, սեղմ ձևով ընդգրկում է միաբարական շարժման հայրկապէս լեզվական բնութագիրը՝ թե՛ ժամանակի եւ կարևորագույն դեմքերի առումով, թե՛ լեզվական-մշակութային փոփոխության արևակերպից:

Մասնավորաբար կարելի է նշել հետևյալը.

ա) Բագրապունին ունի միաբարական շարժման ավելի իրական ըմբռնում, քան նույնիսկ հետագա հեղինակները. նա իրավամբ այդ շարժման սկիզբ է նշում ԺԴ դ. և փայլիս առավել աչքի ընկնող դեմքերի անուններ: Ուստի սրբագրելի է դառնում այն պնդումը (օրինակ՝ Ն. Աճառյան եւ ուրիշներ), թե լարինաբանությունը մեզանում դիպրվում է ոչ վաղ, քան ԺԷ դ.:

բ) Ելնելով գրաբարի «սրբագործման» (ինձ՝ մաքրման) ճիշտ մոտեցումից՝ լարինաբան նորամուծությունները դիպրվում են «անճոռնի եւ անհեթեթ». դրանք մեծ չափերի են հասնում ԺԷ դ. ավելի «օրթողոքս» ձևով եւ ավելի «կարարելագործված»:

գ) Նման աղավաղումներն իրենց ձևակերպումն են ստանում ժամանակի լարինաբան քերականություններում, որոնց հանդեպ որոշակի թերահավաքություն է հանդես բերում Բագրապունին:

դ) Եւ վերջապէս, ամենախոցելին, ըստ Բագրատունու, հայոց կրօնական գրականութեան մեջ նման մոտեցմամբ միջամտություն հանդես բերելն է, որն առավել չափով նկատվում է Աստվածաշնչի եւ հոգեւոր ոլորտի մյուս գրքերի (Ճաշոց եւ այլն) հրապարակություններում: Ուստի Աստվածաշնչի հետագա տպագրությունն իր իսկ Բագրատունու ձեռքով նման «սրբագրումներից» ազատվելու մտադրության իրագործում է եղել:

Պէտք է նշել, որ լատինաբանության մշակութային, լեզվական սեղմ, հակիրճ գնահատությունը, որ տալիս է Ն. Արս. Բագրատունին, իր ժամանակի առումով բավականին արժեքավոր է, որ այն որոշակի չափով հաշվի է առնվել հետագա ուսումնասիրողների կողմից:

Լատինաբանության հարցերը արմատական բնության է առնում Ն. Արսեն Այրբընյանն (1825-1902 թթ.) իր ուշագրավ հոդվածներում եւ հայրնի աշխատությունների առանձին բաժիններում: Դրանք ունեն կարեւոր նշանակություն նման հարցերի նոր վերլուծության եւ գնահատության համար:

Ամենից առաջ նկատի ունենք «ԺԴ-ԺԵ դարերու հայերենի վիճակը» հոդվածը⁷, որտեղ հեղինակն ըստ էության տալիս է նաեւ լատինաբան խորթությունների լեզվագիտական վերլուծությունն ու գնահատությունը: Այդ հոդվածում առանձնացվում է լեզվական «խանգարումների» երկու տեսակ՝ «բնական» եւ «արուեստական» (յմա՝ արհեստական - Վ. Ն.): Եւ ըստ այդմ բնության է առնում նշված դարերի հայերենի լեզվական վիճակը, ընդ որում «արուեստական» է դիտվում լատինաբանությունը: «Արդէն հինգերորդ դարէն ինչուան տասնութերորդ դարը գրաբանի սքանչելի վայելչութիւնը քանի գնաց խամբած ցամբած ու արուած ըլլալով՝ աս տասնութերորդին մէջ ուրիշ զարհուրելի հարուած մ'ալ կրեց, որով կրնանք ըսել, թէ արդէն տկարացած լեզուն՝ վերջին հարուածն ընդունեցաւ, այսինքն շունչն ու կեանքը վերացաւ վրայէն» (էջ 16): Այդ հարվածը լինում է այն, որ սրբեղծված «լատին - հայ միաբանությունը», ժամանակի հայերենի մեջ տեսնելով ինչ-ինչ «պակասություններ», արտաքին միջամտությամբ «բերականական փոփոխություններ բրին ու կանոններ հաստատեցին, եւ վերջապէս հանեցին *լատին-հայ* (ընդգծումը մերն է-Վ.Ն.) լեզու մը, որ թելադր ըստ արտաքին կերպարանացը հայերէն, բայց լատիներէնի կաղապարով ձուլեալ զանգուած մըն էր» (Անդ):

Նոդվածի հեղինակը նշում է լեզվական այդ տարբերակին բնորոշ այնպիսի առանձնահատկություններ, որոնք վերաբերում են գոյականի հոլովներին, անեզական անունների կազմությանը, ածականի համաձայնությանը, վերջինիս գերադրական աստիճանի ձեւավորմանը, հոլովական հարաբերություն արտահայտող մասնիկների ներմուծմանը, բայական խորթ ժամանակաձեւերին տեղ տալուն, բառերի իմաստային եւ ձեւական պարզեցումներին, շարահյուսական համաձայնության անհարկությանը, «խժալուր» բառաբարդումներին, ոչ հստակ եւ արտառոց տառադարձությանը, լատիներեն ձեւերի սխալ թարգմանություններին եւ այլն:

Նկատարելի է, որ լատինաբան հեղինակները նման մոտեցում են հանդես բերում իրենց երկերը հրապարակելիս, եւ «հին ու նոր մարենագրություններու տպագրութեանը անդրադառնալիս» (էջ 32):

7 Տե՛ս «Երուսա», 1849, թ. 4, էջ 16, թ. 5, էջ 20, թ. 8, էջ 32: Նոդվածի հեղինակն, անշուշտ, Ա. Այրբընյանն է, որովհետեւ հարցերի տեսական գնահատության նույն դրվածքը նկատվում ենք նրա «Բնական քերականության» մեջ:

Այսպիսով լատինաբան շարժման գնահատության հարցում զուգահեռ է ակնարկում հունաբան հայերենի օրինակը. «Բայց առանց առասպիծան ապականության ու թիրառության ըստ մասին օգնական եղած կրքնայ սեպուիլ նախնեաց ժամանակէն եղած առաջին գլխաւոր արեղավորութիւնը, որն որ Ե դարուն մէջ լեզունիս կրած էր, այսինքն Ս. Մեսրոպայ երկրորդ դասուն աշակերտներէն, որոնք սա վերջիններուն պէս մտածելով, ինչպէս ասոնք լատիններէնի ձեռք, այնպէս ալ յունարէնով լեզուն կերպարանքը փոխած էին...» (էջ 20):

Շոշափվող հարցերի արեսակերից հիշյալ հոդվածին սերտորեն առնչվում են հետագայում լույս տեսած եւս երկու հոդվածներ⁸:

Լատինաբանությունը շարունակաբար քննարկվում է նաեւ 1855 թ. փապագրված «Բազմավէպի» էջերում⁹, որպէզ բերվում են ոչ միայն երևույթը բնութագրող արտաքին հանգամանքները, այլև նշվում են լեզվական բնորոշ մի քանի հատկություններ:

Վերջիններս կարելի է ներկայացնել հետևյալ խմբավորմամբ.

ա) շարահյուսական միավորների լրիվ և պարզադիր համաձայնություն,

բ) բայերի ներգործական և կրավորական սեռերի արտահայտության փոքրերակում (հմմտ. *խմանաւ* «խմանում է» և *խմանի* «խմացվում է»),

գ) անեզական և անհոգնական բառերի «հստակեցում» (խմ' անեզականին եզակա-նի, իսկ անհոգնականին հոգնականի ձևի հատկացում (հմմտ. *գիրգ* «մեկ գիրք» և *գիրք* «գրքեր»),

դ) բառերի «նյութական թարգմանություն» (հմմտ. *magistere* - *մեծիրապետ*, փխ. *մեծապետ*, *մեծ մասամբ*, *manuductio* - *ձեռքածություն*, փխ. *աղեքսումն*, *աղօթք*, *abusare* - *ապավարել*, փխ. *շեղել*, *աղճարել*) և այլն:

Նեղիմակը նշում է, որ նման աղավաղությունը հետագայում հանդիպում է ընդդիմության, և դա անում է «Մխիթար հանդերձ իրովքն»: Նշում է նաև, որ լատինաբանների առաջ բերածը, իբրեւ արհեստական սովորույթ, կարելի է հաղթահարել: Դրա լավագույն ուղին ցույց է տալիս Այսրբեյանը. «յաճախ ընթերցումն քաջաց մարտնագրաց մերոց՝ վեհագոյն վարժապետ լիցի մեծիս այսմիկ և դժուարին կրթութեան» (էջ 24):

Նկատելի է, որ հոդվածի հեղինակը սեղմ ձևով ներկայացնում է ոչ միայն լեզվական այդ կարգի խորությունների բնույթը, այլև դրանց՝ ժամանակին ձեռնարկված հաղթահարման միջոցառումները, քանի որ լրացուցիչ հրահանգ այդպիսի խորություններով լեզուն այլևս չի ճանաչում, ինչպես նաև լեզվական նման վիճակից դուրս գալու, իրական և նպատակադիր ուղիով գնալու վերաբերյալ:

Էդուարդ Նյուրմյուզյանն (1799-1876 թթ.) իր բանասիրական-լեզվագիտական լավագույն հոդվածներից մեկում¹⁰ լատինաբանությունը դիտարկում է մեր լեզվի ոչ հայկաբան փոքրերկաններից մեկը. հայերենի ներսում նա առանձնացնում է նաև «յունաբանություն», «իսլա-լաբանություն», «գաղղիաբանություն» և «փրանկաբանություն» փոքրերակները: Նեղիմակը

8 [Ա.Այսրբեյան], Խորհրդածությունը ազգային լեզուի վրայ. «Երուսա», 1852, թ. 6, էջ 23, թ. 12, էջ 47-48, թ. 19, էջ 75-76, թ. 22, էջ 87-88, թ. 25, էջ 98-99 և թ. 30, էջ 118-119: [նույնը], Մարտնագրական խորհրդածություններ. ն.պ., 1856, թ. 30, էջ 118, թ. 31, էջ 122-123, թ.37, էջ 146-147:

9 Տե՛ս «Տեսությունը ի լատին բարբառ, և որ ինչ ի վարժից նորին շահ.» «Բազմավէպ», 1855, հ. ԺԳ, էջ 21-24: Նոդվածի հեղինակը ստորագրել է մեկ աստղանիշով (*):

10 Եդ. Նյուրմյուզյան, Թարգմանութեան վրայ. «Բազմավէպ», 1873, հ. I, էջ 321-333:

լատինաբանության երևան գալը բացառում է թարգմանության ընթացքում երևույթի «ճշգրտությունը պահելու» հանգամանքով, այսինքն՝ թարգմանական ստրկությունը պարզապես է դառնում լեզվական ինքնատիպության գոհաբերման:

Ըստ այդմ Նյուրմյուլլանին իր աշխատանքում նշում է լեզվական մի շարք խորթություններ, որոնցից ուշագրավ են հետևյալները.

ա) բառերի և ռճերի ընդօրինակում, նախադրությունների, անհատական բառերի և բայերի անսրելի նորաձևացում (հմմտ. *ընտան*, փիլ. *ի տան*, *նիքեան*, փիլ. *յիսթեան*, *satisfactio* ~ *բասարարութիւն*, փիլ. *հասրուցումն*, *intime* ~ *նեքսունասպէս*, փիլ. *ի սրսթ*, *maximus* ~ *մեծագունեղ*, փիլ. *ամենեւին մեծ*, *յոյժ մեծ*, *conjectura* ~ *փաղարկութիւն*, փիլ. *կարծիք* և այլն),

բ) տարօրինակ թվակազմություն, շարահյուսական բաղադրիչների համաձայնություն, իմաստային անճշգրտություն [(օրինակ՝ *միս* – *մսոյ* ~ *carnis* (< *corporis*, փիլ. *մարմնոյ*)],

գ) բայերի կրավորականի սխալ կազմություն, ցոյական հիմքերի անսրելի մեջբերում, ոչ անհրաժեշտ փոխառությունների դիմում (օրինակ՝ *լեպեմ* ~ *ledere* և այլն):

Այսպես հեղինակի եզրակացությունը հետևյալն է. «...բերածներէն բառական կ'իմացուի, թէ ինչ վիճակի մէջ էր գեղեցիկ գրաբառ լեզունիս, որ բոլորովին նոր լեզու մը դարձեր էր ու երթալով կը տարածուէր այս նորերով լեզուն...» (էջ 324):

Ներսէս Անդրիկյանի (1879-1936 թթ.) երկու հոդվածներում¹¹ շար թռուցիկ ակնարկ կա լատինաբան հայերենի վերաբերյալ արդեն հայրենի գնահատությունների սահմաններում:

Լատինաբան հայերենը, առհասարակ լատիներենի և հայերենի առնչությունները Ն. Աճառյանը (1876-1953 թթ.) քննում է իր աշխատություններից երկուսում¹²:

Առաջինում հեղինակն անդրադառնում է միաբարական շարժման համառոտ պատմությանը, լատինաբան ազդեցության ձևերին, դրանց տարածման բնույթին, այլև հաղթահարմանը: Այսպես առավելությունն այն է, որ Աճառյանը համեմատաբար ավելի լայն ընդգրկումով է քննարկում արժարժվող հարցերը՝ կապված լատինաբանությունը ոչ միաբարական շրջաններում տարածվելու երևույթի, այլև լատինաբանության հաղթահարման գործում վեներիկիցների ձեռքբերումներին մշակութային այլ կենտրոններում արձագանքելու հետ և այլն: Ըստ այդմ նկատելի է նոր ժամանակներում հայոց լեզվի պատմության հարցերն ավելի ամբողջական ձևով ներկայացնելու ձգտումը:

«Նայոց լեզվի պատմության» (I մաս) մեջ Աճառյանն առանձնացնում է հարյուր բաժին՝ «Հոմեական ազդեցությունը հայերենի վրա»: Այդ բաժնի վերջում նշվում է հետևյալը. «Լատիներենի ազդեցությունը հայերենի վրա 329 թվին դադարելուց հետո (հայ-հռոմեական առնչությունն առկա էր Ք. ա. 66-ից ի վեր -Վ.Ն.), վերսկսվում է երկրորդ անգամ Կիլիկյան թագավորության ժամանակ՝ ԺԳ- և ԺԴ դարերին, Ունիթոսական բարոզիչների ձեռքով: Երկու ազդեցությունները կրում են բոլորովին տարբեր բնույթ, ուստի մենք էլ բաժանում ենք երկուսը իրարից և վերջ տալով այսպես այս գլխին, երկրորդ շրջանի մասին

11 Ն. Անդրիկյան, Գեղեցիկը լեզուն մեջ. «Բազմալեզ», 1908, հ. ԿԶ, էջ 157–162: Նույնի, Ուրուագիծ հայ մաթեմատիկայի. և .դ., 1911, հ. ԿԹ, էջ 301–306, էջ 337–345 և այլն.

12 Ն. Աճառյան, Պատմություն հայոց նոր գրականության, պրակ Ա, Վաղարշապատ, 1906, էջ 12–17: Նույնի, Նայոց լեզվի պատմություն, մմ. I–2, Եր., 1940–1951, էջ 324–330, 296–323:

կիստենք առանձին գլխով՝ «Եւրոպական փոխառությունները հայերենում և լատինաբան հայերեն, վերնագրի փակ (գլուխ ԻԵ)» (էջ 329-330): Նոմնական հին ու նոր ազդեցությունների բնույթն, իրոք, բավականին տարբեր է եղել, և այդ տարբերությունը, կայանում է ժամանակի, լեզվական շփումների ձևերի ու միջոցների, գործառության ոլորտների, հասարական-սոցիալական վերաբերմունքի և այլ առանձնահատկությունների մեջ:

Հայերենի կրած լատինապիս ազդեցությունների մասին Ն. Աճառյանը խոսում է իր աշխատության երկրորդ մասում: Նա հայ-լատինական շփումները դնում է ԺԱ դարից ի վեր: Այդ շփումները, ըստ Ն.Աճառյանի, ավելի են սերտանում իտալականի ժամանակ, և աշխատության 296-298 էջերում ակնարկի կարգով խոսվում է նման շփումների իբրև հարցի արդարքին կողմի մասին:

Աշխատության այդ մասում առավել հետաքրքիր է այն, ինչը վերաբերում է լատինաբան հայերենին: Այդ հարցը, ի տարբերություն փոխառությունների, Աճառյանը քննում է այն արևակներով, թե «ինչ ազդեցություն է գործել Եւրոպան հայերեն լեզվի ներքին կազմության, ոճաբանության և քերականության վրա» (էջ 307):

Այսպես, ևս Աճառյանը նախ անդրադառնում է լատինաբան հայերենի գոյացման արդարքին հանգամանքներին՝ մեծապես հենվելով Դեոնո Ալիշանի և Գարեգին Զարբանալյանի ուսումնասիրությունների փյալների վրա: Այնուհետև գրում է, որ լատինաբան հայերենը թեև սկզբնավորվում է ԺԴ դ., սակայն «այս հայերենը շատ կանոնավոր է և լատինաբան կոչվելու ոչ մի պարտա չունի: Լատինաբան հայերենը հորինված է ավելի ուշ, ԺԶ դարում, Նոմում» (էջ 310):

Այս առումով հարկ ենք համարում նշելու հետևյալը.

ա) Նման տարբերակումն առաջին անգամ չէ, որ կատարվում է. այն հանդիպում ենք նաև նախորդ ուսումնասիրություններում¹³, ըստ որում գուր բանասիրական հետազոտությունների շրջանակում:

բ) Այդ տարբերակումը ոչ այնքան լեզվական բուն փաստերի վերլուծության, որքան նախնական և հպանցիկ փայլաբանության արդյունք է, հատկապես որ այդ առումով չեն բերվում որոշակի փաստեր ու լեզվական համեմատություններ:

գ) Լատինաբան հայերենը տարբեր ժամանակներում չէր կարող միակերպ ու միատեսակ լինել, ուստի այս պարագայում վճռական դեր ունի ոչ այնքան բացարձակ տարբերությունը, որքան հարաբերական ներակայումը: Այնինչ, կարծում ենք, որ լատինաբան հայերենը կրել է լատինների ազդեցությունը սկզբնական շրջանից ի վեր մինչև այդ ազդեցության հաղթահարումը: Տարբերությունը ոչ այնքան բանական է, որքան որակական:

Ն. Աճառյանի մոտեցումը միակողմանի է և արվում է լատինաբան հայերենի ԺԶ դ. լեզվական վիճակի ուղղագծմանն անմիջապես անցնելու գործնական նպատակով: Նարցն այն է, որ լատինաբան հայերենն սկզբնավորվում է ԺԴ դ., և հետագայում փոքր-ինչ թուլանում է նրա զարգացումը, իսկ ԺԶ վերջին և ԺԷ դարում այն նոր վերելք է ապրում: Երևույթի բնութագրման մակերեսայնության պայմաններում, որ նկատելի է Աճառյանի հիշյալ աշխատության մեջ, անտեսվել է սկզբնականն ու հետագան, իսկ ամենավերջում ընդգծվածը («վերածնունդով») դիպել է իբրև բուն երևույթ:

13 Տե՛ս, օրինակ, Ա. Բագրատունի, Հայերեն քերականությունի ի պէս զարգացելոց, Վենետիկ, 1852:

Այնուհետև, Աճառյանը բերում է համապատասխան բնագրային հարվածներ (ընդհատված), անմիջապես անցնում լատինաբան հայերենի «հորինվածության» ուղղագծմանը (Էջ 313-323): Այսպես էլ, ցավոք, նա գերազանցապես հենվում է Նովիաննես (Նովով) Կոստանդնուպոլսեցու հայերի քերականության (Նոմ, 1674) տվյալներով բնորոշվող նորմայի վրա և ըստ այդմ գծում լատինաբան հայերենի «հորինվածությունը»: Սա երևույթի քննարկման ամենահեշտ և ամենագործնական եղանակն է, սակայն նրա պարկերը ամբողջական և լիովին չներկայացնող եղանակ է: Նախ և առաջ համարում նշելու, որ այդպիսի բերվում են միայն այն նորամուծությունները, որոնք ժամանակին արձանագրված են հիշյալ քերականության մեջ, ուստի հասկանալի է, որ դրանով չի ամբողջանում լատինաբան հայերենի ողջ պարկերը:

Նայերենում տեղ գրած լատինաբան նորամուծությունները փառքեր չափերով են ներկայանում հայոց լեզվի զարգացման փառքեր փուլերում: Դրանք զանազան չափերի են հասնում նույնիսկ միևնույն շրջանի առանձին գրավոր աղբյուրներում, ավելին՝ միևնույն հեղինակի փառքեր երկերում, նույն երկի հայերեն հին ու հնարագա թարգմանություններում և այլն: Դա միանգամայն ակնառու է դառնում նման գրավոր աղբյուրների մանրամասն, առանձին-առանձին քննության դեպքում: Դրանից բացի՝ այդ իրողությունն այս կամ այն չափով իր արագությունն է գրել ԺԴ-ԺԷ դդ. երևան եկած լատինապիս քերականություններում: Այնպես որ, կարծում ենք, բավականին միակողմանի է միայն մեկ փուլի քերականության տվյալների հիման վրա լատինաբան հայերենի «հորինվածության» ուղղագիծ փառք, որ իրականացնում է Ն. Աճառյանն իր հայերի աշխատության մեջ: Մենք հակված ենք կարծելու, որ հնարագայում ևս հարկավոր է շարունակել աշխատանքը լատինաբան հայերենի ուսումնասիրության ուղղությամբ՝ ընդգրկելով ավելի մեծ թվով գրավոր աղբյուրներ, կատարելով դրանց լեզվական առանձնահատկությունների առավել մանրամասն քննություն, տարվել վերջիններիս բազմաօրինակ զգուշացումներ, գործառնական չափանիշներով բնութագրումը և այլն:

Լատինաբան հայերենին անուղղակիորեն վերաբերող հարցերի է անդրադառնում նաև Էդ. Աղայանը (1913-1991 թթ.): Նրա աշխատություններից մի քանիսում տեղ գրածը հայոց լեզվի պարմության մյուս հարցերին առնչակից դիտարկումներ են¹⁴:

Առաջինում (Էջ 104-110) մեծանուն լեզվաբանն ավելի շատ ակնարկում է հայ-լատինական հարաբերությունների սկզբնավորման մասին: Ըստ որում այդ հարաբերությունները զարգացել են, նախ, «քաղաքական-դիվանագիտական ճանապարհով» (Էջ 104), այնուհետև՝ «սկսեցին էլ ավելի զարգանալ փոփոխական և կրոնական հողի վրա» (ն.պ.): «Սակայն շատ շուտով այդ քաղաքական-դիվանագիտական ու փոփոխական հարաբերություններին ավելացավ նաև երրորդը՝ կրոնականը» (Էջ 105): Ուշադրություն է դարձվում նաև այն բանին, որ հիշյալ երեք հանգամանքները խթանում են հայերին օտար լեզուներ, իսկ օտարներին՝ հայերեն սովորելու (ն.պ.): Միանգամայն ճիշտ է հերևյալ դիտողությունը. «Եթե մինչև պատերազմերը դարը եվրոպական արևելագիտության, հերևյալ և հայագիտության

14 Էդ. Աղայան, Լեզվաբանության պարմություն, հ. 1, Եր., 1958: Նույնի, Գրաբարի քերականություն, հ. 1. Միևնույնիսկ, գիրք Ա. Նույնի, Գրաբարի պարմություն, Եր., 1964: Նույնի, Գրաբարի պարմության շրջանաբաժանումը. «Բաները Երևանի համալսարանի», 1974, թ. 2, էջ 58-81:

կենսությունն էր, հիմնականում, Նոմը, ապա ԺԷ դ. այդպիսի կենսություն է դառնում նաև Փարիզը՝ կարդինալ Ռիշելիյի (1624-1642) հիմնադրած (1645 թվին) գիտության ճեմարանի և բազմակզվյան փայտանի շնորհիվ» (էջ 108):

Այնուհետև, Էդ. Ադայանը համոզիչ կերպով բնութագրում է ԺԷ դ. մշակութային գործիչների արածը լատինաբան հայերենի մշակման գործում: Այս փեսակերպից հարկանշական է հերելյալը. «Ներկերով լատիններենին, այդ հեղինակները (իմա՝ Կդ. Գալանոս, Ռսկան, սրանց հետևող՝ Նովի, Նոլով, այլև՝ Խաչ. Էրզրումեցի – Վ.Ն.) հայերենը արհեստականորեն ենթարկում էին լատիններենի կանոններին. այսպես՝ նրանք անխորաբար, առանց բացատրության ածականը համաձայնեցնում էին գոյականին թվով և հոլովով ... մեր հին մատենագրության մեջ եղած այն օրինակները, որոնց մեջ համաձայնեցում չկա, վրիպակ են համարում ... այս պարծառով է, ահա, որ այդ քերականությունների հեղինակները «խանգարիչք լեզուի» («Corrupteurs de la langue» - Girbied, իմա՝ Շ. Ջրպետյան – Վ.Ն.) անուն են ստացել» (էջ 109-110):

Երկրորդ աշխատության մեջ Էդ. Ադայանը սեղմ ձևով խոսում է հայ լեզվաբանական մտքի պարմության երկրորդ շրջանի՝ «փնթություն քերականական աշխատությունների շրջանի (ԺԷ դարից մինչև մեր օրերը)» առաջին ենթաշրջանի՝ «լատինապիս քերականությունների» (ԺԷ-ԺԸ դարեր) առանձնահատկությունների մասին՝ փառով երևույթի համեմատաբար իրական և ճիշտ գնահատությունը (էջ 16-20):

Առհասարակ գրաբարի և առանձնապես լատինաբան հայերենի նորովի ուսումնասիրության համար խիստ կարևոր են Էդ. Ադայանի այն դրույթները, որոնք առաջադրված են գիտական համոզիչ նկարագրությամբ լուծված են հիշյալ երրորդ աշխատության մեջ: Ընդամենը մեկ հոդվածի սահմաններում հեղինակին հաջողվել է փառ ոչ միայն գրաբարի ողջ պարմության շրջանաբաժանումը, այլև հող նախապարտասպել այդ բնագավառում թե՛ համաժամանակյա և թե՛ փարաժամանակյա փարբեր կարգի աշխատքներ ծավալելու: Տվյալ դեպքում մեզ համար շար մեծ նշանակություն ունեն Էդ. Ադայանի փեսական այն գնահատությունները, որոնք վերաբերում են ԺԴ-ԺԸ դդ. գրաբարի կառուցվածքին, ինչպես նաև նրա զարգացման ու առաջխաղացման պարմությանը: Էդ. Ադայանն անդրադառնում է լատինաբան հայերենին՝ Ա. Այրբնյանի կարարած շրջանաբաժանման գնահատության առիթով:

Ուշադրության են արժանանում հերելյալ հանգամանքները.

ա) Այրբնյանը հարուկ կերպով առանձնացնում է գրաբարի երրորդ շրջանը՝ իբրև «միջին ժամանակներ», որի ընթացքում, ըստ Այրբնյանի, փեղի է ունենում «երկրորդ յեղաշրջությունը»: Դա այլ բան չէ, քան, ինչպես գրում է Էդ. Ադայանը, «լատինաբան գրաբարի երևան գալը, որի փարբերն ունի Նովիանենս Բոնեցու «Նամաօր հաւաքումն յաղագս քերականին» աշխատությունը» (էջ 60):

բ) Այրբնյանը գանազանում է գրաբարի չորրորդ շրջանը՝ իբրև «առաջին յեղաշրջության շրջան (ԺԸ դարից մինչև ԺԹ՝ կեսերը)»: Այս ընթացքում, ըստ Էդ. Ադայանի, «լատինաբանության փարածումը «մաքրեց» գրաբարը ռամկաբանությունից, փայց ինքը՝ լատինաբանությունը, աղճապեց գրաբարը: Այս շրջանում սկսվում է լատինաբանության վերացումը, որ հիմնականում Վենետիկյան Մխիթարյանների հայերենագիտական գործունեության հիմնական խնդիրներից մեկն էր» (էջ 60-61):

գ) Այրրեյանի կարգաբանական առարկաները համարվում է ճշմարիտ, սակայն որոշ դեպքերում առարկելի. «Ջրանաբաժանումը և գրաբարի տարբեր վիճակների ու գրական մշակումներով ստացված դրսևորումների բնութագրումները,- նշում է Էդ. Աղայանը,- հիմնականում ճշմարիտ են, թեև շար կերպերում առարկելի են հեղինակի կողմից տրվող մեկնաբանությունները գրաբարի, իբրև գրական լեզվի, պարամության տարբեր հարցերի մասին: Առանձնապես առարկություն է վերցնում լատինաբանության («երկրորդ յեղաշրջություն».) այսինքն՝ «յեղաշրջություն»-Վ. Ն.) ընդհանրացումը: Թեև իսկապես լատինաբանությունը մեծ արժանություն ստացավ ԺԵ-ԺԸ դարերում, բայց ընդհանուր տիրապետության երբեք էլ չհասավ» (էջ 61):

Ինչպես արևմտում ենք, Էդ. Աղայանի դիտարկումները մանրամասն են, իսկ լեզվի պարամության առումով՝ հիմնավոր և փաստականորեն անխոցելի, ուստի ունեն որոշակի նշանակություն հիշյալ երևույթի հետ կապված հանգուցային հարցերն ավելի ճիշտ ձևով քննարկելու և լուծումներ տալու գործում: Էդ. Աղայանի սույն շրջանաբաժանումն առհասարակ ամբողջությամբ վերցված հիմք է հանդիսանում հայոց լեզվի գրաբար տարբերակի պարամության ամբողջական ուսումնասիրության համար¹⁵:

Լատինաբան հայերենի հարցերին անդրադարձել է Գ. Զահուկյանը (1920-2005 թթ.) իր աշխատություններից մի քանիսում:

«Գրաբարի քերականության պարամություն» գրքում¹⁶ հարցի գնահատությունը մասնափորձեր են տրվում է Նովիանինս Բոնեցու քերականության մասին եղած մարեմադկական մի տեղեկության և պահպանված չնչին հատվածի հիման վրա¹⁷: Ըստ այդմ նշվում է ԺԴ դ. լատինաարի քերականության սկզբնավորման, այդ ժամանակ ծավալված միաբարակա շարժման մասին: Ձեռքի տակ չունենալով Նովի. Բոնեցու քերականությունը, այն որոշակի ենթադրությամբ համարելով հայ լատինաարի քերականությունների նախօրինակը՝ այն ժամանակ Գ. Զահուկյանը դիտարկել և արամաբանված շարադրում էր սույն աշխատությունը:

Առավել հետաքրքիր են հետևյալ ձևակերպումները.

ա) Այդ քերականությունը ստեղծված է հայ նախորդ քերականությունների և լատիներենի քերականությունների հետևությամբ՝ դառնալով դրանց առաջնեկը մեզանում:

բ) Ուշադրություն է դարձվում այդ երկի փիլիսոփայական-արամաբանական նպատակադրվածությանը: Այդ կռահումն արվում է ձեռագրի հիշատակարանի հիման վրա, ըստ այդմ նշելով՝ «հարկանշական է այն հանգամանքը, որ Բոնեցու քերականական երկը գեղեցիկ է փիլիսոփայական բնույթի երկեր պարունակող մի ձեռագրում» (էջ 291): Նման վերագրումն ըստ էության ճիշտ է, թեև արտաքին հանգամանքը կարող է լինել և պարահական:

15 Ավելի մանրամասն տե՛ս Վ. Գ. Նամբարձումյան, Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Եր., 1990:

16 Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Նայաստանում (Ե-ԺԵ դդ.), Եր., 1954: Նույնի, «Նին հայերենի հոլովման սխալները և նրա ծագումը», Եր., 1959: Նույնի, «Լեզվաբանության պարամություն», հ. 1, Եր., 1960: Նույնի, «Նայոց լեզվի զարգացման փուլերը», Եր., 1964: Նույնի, «Գրաբարի քերականության պարամություն (ԺԵ-ԺԹ դդ.)», Եր., 1974: Նույնի, «Общее и армянское языкознание», Ереван, 1978:

17 Տե՛ս Յ. Տաշեան, Յուրակ հայերեն ձեռագրաց մարեմադարանին Միսիարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895:

«Նին հայերենի հոլովման սխալները եւ նրա ծագումը» աշխատության մեջ մեզ հետաքրքրող հարցերը մասնակիորեն շոշափվում են ներածության բաժնում՝ հայերենի քերականությունների պարմության շրջանաբաժանման կապակցությամբ: Գ. Զահուկյանը պարբերում է «լարինարիա քերականությունների շրջան (ԺԷ դարի սկզբներից մինչև ԺԸ դարի կեսերը)»: Այսպես բերվում են լարինարիա քերականությունների այն առանձնահատկությունները, որոնք առնչվում են գրաբարի հոլովման համակարգին. դրանք հիմնականում վերաբերում են հոլովների քանակին, դրանց արտահայտության պարբերություններին, կառուցվածքային առանձնահատկություններին, թվի դրսևորմանը, հոլովման փափկության ձևաբանական դասակարգմանը եւ այլն: Գ. Զահուկյանի դիտարկումները բավականին ցայտուն են դարձնում գրաբարի հոլովման համակարգի պարմական առաջնությանը հիշյալ շրջանում: Ավելին, այսպես առանձնացվող պարբերությունները կարելի է նկատի ունենալ լարինարան հայերենի հոլովման համակարգի համապատասխան հատկանիշներն առանձնացնելիս:

Գ. Զահուկյանի հիշյալ երկու աշխատություններում արծարծված հարցերը քննության են առնված այն մոտեցումով, որը գրեթե նույն ժամանակում լայնորեն մշակվում էր հեղինակի մյուս՝ «Լեզվաբանության պարմություն» աշխատության մեջ: Այսպես երևույթը դիտարկվում է համաշխարհային լեզվաբանության պարմության կտրվածքով, որտեղ հայերենին վերաբերող հարցերը քննարկվում են ընդհանուր լեզվաբանական-քերականագիտական շարժման առնչությամբ: Առհասարակ լարինարան ազդեցության եւ առանձնապես հայ-լարինարան առնչության վերաբերյալ դիտողություններ կան այն բաժիններում, որոնցում ներկայացվում է լեզվաբանության պարմությունը «միջին դարեր» (էջ 103-166), այլն «վերածնության շրջան եւ ԺԷ-ԺԸ դդ.» (էջ 167-262) ենթաշրջաններում: Տվյալ դեպքում, մեզ հետաքրքրող հարցը ուշադրության առարկա է «լարինարան ազդեցության ոլորտում» գտնված եւ լարինարանի առնչությամբ երևան եկած ընդհանուր (եւ հայ) քերականագիտական մտքի զարգացման պարմությունը նվիրված բաժիններում եւ հարվածներում: Արվում են սխալմամբի վերլուծություններ, արվում պարմամշակութային օբյեկտիվ գնահատություններ, որոնք, ինչ խոսք, խիստ կարևոր են հայկական միջավայրում երևան եկած լարինարանության եւ լարինարան գրաբարի նոր ուսումնասիրությունների համար:

Ավելին, Գ. Զահուկյանի կարևորագույն դիտողությունները, որոնք կապվում են լեզվաբանության պարմության վերհանման հետ, կարող են կողմնորոշիչ դեր խաղալ ոչ միայն լարինարան հայերենի լեզվաբանական արժեքավորման, այլև համապատասխան լեզվական նյութի համակարգված քննության գործում:

Մեզ հետաքրքրող հարցերի դրվածքի եւ ժամանակագրական սրույգ բաշխման առումով Գ. Զահուկյանի «Նայոց լեզվի զարգացման փուլերը» աշխատության մեջ ոչինչ չի ասվում, թեև նա նշում է. «Մենք լեզվի պարմությունը դիտում ենք իբրև փայլ լեզվի արարեսակների պարմություն: Առանց սրա, լեզվի պարմության բնագավառը արհեստականորեն նեղացվում է, ճիշդ չի արտացոլվում լեզվի կապը այն կրող ժողովրդի պարմության բոլոր ոլորտների հետ, միակողմանի են պարկերացվում լեզվի մեջ կարարված բոլոր

կարգի փոփոխությունների բնույթն ու պարզառությունը»¹⁸: Լատինաբան հայերենի պարմության համար առավել հեղափոխական է Գ. Ջահուկյանի «Գրաբարի քերականության պարմություն (ԺԷ-ԺԹ դդ.)» աշխատությունը: Այդպիսով հեղինակն իր վերլուծությունները և այս կամ այն հարցի գնահատությունն անում է միայն փոխաբերական շրջանի քերականությունների ընթերցման նյութի հիման վրա:

Փաստերը ենթադրում են կոնկրետ վերլուծություն և որոշակի գնահատություն:

Այդուհանդերձ, գծվում է լատինարիչ քերականությունների շրջանը (ԺԷ դ. առաջին կես – ԺԹ դ. երրորդ քառորդ): Այդ շրջանն այդքան ժամանակով սահմանափակելը հեղափոխում իրավացիորեն արժանանում է առարկության¹⁹, իսկ առհասարակ այն միանգամայն իրապես է արագացում ԺԷ-ԺԹ դդ. լատինարիչ քերականությունների ժամանակային ընդգրկումը, առավել ևս՝ ներքին խմբավորումը, ենթադրեցականների գոյությունը: Այսպես, հիշյալ շրջանն, իր հերթին, բաժանվում է չորս ենթափուլի (և դա ներկայացվում է իբրև քերականությունների «տեսակներ»՝ իրենց ժամանակային հաջորդականության մեջ). «լատիններեն տեխնիկական քերականություններ (ԺԷ դ. առաջին կես)», «լատինարիչ ռացիոնալիստական քերականություններ (ԺԹ դ. երրորդ քառորդ)», «հունա-լատինարիչ քերականություններ (17-րդ դ. 30 - 90-ական թթ.)» և «լատինարիչ-բանասիրական քերականություններ (ԺԹ դ. սկզբից մինչև երրորդ քառորդ)»:

Ուստի իրենց բնույթով իրարից միանգամայն տարբեր են դիպվում առաջին դեպքում Ֆրանցիսկոս Ռիվալայի և Կոնստանտին Գալանտի, երկրորդ դեպքում՝ Ռակո Ներսիսյանի և Նովիկոս (Նով) Կոստանյանի աշխատությունները, երրորդ դեպքում՝ Սիմեոն Ջուլայեցու, Նովիկոս (Նով) Կոստանյանի և Խաչատուր Էրզրումցու, չորրորդ դեպքում՝ Յոհան Զրյոդերի, Նալոմ Կիլիմի, Միխայիլ Սեբաստիանի և Բադյասար Դալիի քերականությունները:

Հիշյալ քերականությունների վերլուծությունն ու գնահատությունը Գ. Ջահուկյանի կողմից արվում են առանձին-առանձին, սակայն աստիճանական զարգացման ձևով. հեղափոխականության մեջ նկատվող նորարարությունն ու նորամուծությունը նոր քայլ են համարվում իրենց նախորդ(ներ)ի համեմատությամբ: Ըստ այդմ էլ աշխատության մեջ ուրվագծվում է ժամանակի լատինարիչ քերականություններում արագացված լատինաբան հայերենի լեզվական պարելը:

«Ընդհանուր և հայ լեզվաբանություն» աշխատության մեջ հեղինակն անդրադառնում է նաև հայ լեզվաբանական ուսմունքների սեղմ պարմությանը: Այդպիսով քննվում է «լեզվաբանությունը Նայաստանում Ե-ԺԸ դդ.» խնդիրը: Այն ամփոփումն է հեղինակի «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Նայաստանում (Ե-ԺԵ դդ.)» և «Գրաբարի քերականության պարմություն (ԺԷ-ԺԹ դդ.)» հայերենի աշխատությունների: Այդուհանդերձ նկատվելի է մի էական առանձնահատկություն. այդ հարցերն այսպիսով արժանանում են լայն ուշադրության, քննարկվում են տեսական լեզվաբանության հայեցակետից, արժեքավորում են համաշխարհային լեզվաբանությանը առաջադրվող չափանիշներով:

18 Գ. Ջահուկյան, Նայոց լեզվի պարմության փուլերը, Եր., 1964: Նույնի, «Նայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը», Եր., 1969, էջ 33:

19 Տե՛ս Յովհաննէս Քենեցի, Յաղագս քերականին, էջ 6-7:

Դրանք արժարժվում են հատկապես «Քերականության վիճակը ԺԴ-ԺԶ դդ.» (էջ 281-283), «Լարինական ազդեցության և լարինարիայ քերականությունների շրջան» (էջ 283-284), «Նայերենի առաջին օրար քերականությունները» (էջ 284-296), «Դիոնիսիոս Թրակացու մեկնությունների սկզբունքների գուգակցումը լարինարիայ քերականությունների հետ» (էջ 286-288), «Լարինարիայ ռացիոնալիստական քերականություններ» (էջ 288-290) և «Նեոսցում լարինաբանության դիրքերից» (էջ 290-292) խոստովանողների ներքո: Նյութը շարադրված է հստակ և հետևողական ձևով, նախկինում երևան եկած և ժամանակին այս կամ այն չափով օգտագործված փաստերի հիման վրա:

Լարինաբան առանձին հեղինակների լեզվագիտական ըմբռնումների վերլուծությանը նվիրված աշխատանքներից հիշարժան է նաև Ն. Ներսես Տեր-Ներսեսյանի մի հոդվածը²⁰: Այսպես մասնավորապես քննվում են Ոսկան Երևանցու հայացքները՝ «լարինաբան հայերեն և Ոսկան», «Ոսկանի քերականությունը» և «Ոսկանի Աստվածաշնչի լեզուն» հարցադրումներով:

Նոդվածում ոչ միայն հեղաբերքի են տեսական գանազան հարցադրումները, այլև կոնկրետ լեզվական վերլուծությունները: Այսպես, հեղինակը Ն. Աճառյանի նման փարբերում է «միաբանող եղբայրների» լարինաբանությունն ու լարինաբան հայերենը հետագա՝ Նոմի Ուրբանյան փառարանից դուրս եկած գրքերի լեզվից. ԺԴ-ԺԶ դդ. լարինաբանության միջին սահմանը դնում է 1650 թ.՝ (հակառակ Աճառյանի նշածի՝ 1584 թ.), միաժամանակ նշելով, որ առաջինը եւս «լարինական է, բայց գերծ է լարինաբան հայերենի օրարախորթ խորթություններ» (էջ 311):

Մանրամասնորեն վերլուծվում է Ոսկանի քերականությունը, վեր հանվում նրա ունեցած փարբերություններն ու առանձնահատկությունները նախորդ և հետագա քերականությունների համեմատությամբ, որոնք մեծ մասամբ բացառվում են լարիներենի ընդօրինակման հանգամանքով: Առաջ է քաշվում այն տեսակետը, որ լարինաբան «կարարայալ» հեղինակը Ոսկանն է, ոչ թե Նովհաննես Նոյով Կոստանդնուպոլսեցին (ինչպես դիտում են Աճառյանը, նաև ուրիշներ), որովհետև նա կանխում է սրան «շուրջ 40 փարվա» մի ժամանակով (էջ 316):

Տեր-Ներսեսյանը քննում է Ոսկանի հրապարակած «Աստվածաշնչի» լեզուն, որովհետև այն «գերծ չմնաց լարինաբան ազդեցություններ» (անդ): Ոսկանի վերաբարգմանած գլուխներում ակնհայտ են լարինաբան խորթությունները: Նման խորթություններն առկա են ոչ միայն այդ առանձին գլուխներում, այլև «ամբողջ Աստվածաշունչը ծայրեծայր ենթարկում է քերականական գրաբնութեան և ներմուծում են լարինաբան աստիճաններ, հոդվակերպեր ու բայաձևեր» (էջ 319): Այս դեպքում թվարկվում են «Ծննդոց գրքից» թաղված կարևորագույն խորթությունները:

Նոդվածագիրը գտնում է, որ Աստվածաշնչի լեզվի նման «անհարազատ փարագը գոյատևում է նաև հաջորդ փարագրիչներու (Պարոտ Լարինացիի՝ 1705-ին, Մխիթար Աբրահոմ՝ 1733-ին) հրապարակություններում մեջ, մինչև որ Զոհրապ (1805) և հուսկ Բագրատունի

²⁰ Ն. Ն. Տեր-Ներսեսյան, Ոսկան վարդապետի քերականական ըմբռնումները. «Բազմավեպ», 1966, էջ 310-321:

(1860), ձեռագրական բաղդապություններով՝ հաջողեցան վերակազմել ոսկեդարեան բնագիրը» (անդ, էջ 320):

Նկարենք, որ Ն. Ն. Տեր-Ներսեսյանի հողվածը խիստ օգտակար է լատինաբան հայերենի լեզվական առանձնահատկությունների նկարագրության և հայ մշակութային գործիչների այդ թնի ներկայացուցիչների վաստակը անկողմնակալ ձևով վերլուծելու և արժեքավորելու տեսակետից:

Լատինաբանության սկզբնական շրջանի հարցերը շոշափվում են նաև հմուտ վիճագրագետ-լեզվաբան Սուրեն Ավագյանի կողմից՝ Նովիաննես Քոնեցու «Մեկնություն քերականին» աշխատության բնագրային հրապարակության (Երևան, 1977) ընդարձակ առաջաբանի երկրորդ մասում²¹:

Նեղինակը Նովիաննես Քոնեցու քերականությունը վերլուծում է ոչ միայն աղբյուրագիրական, այլև բնագրագիրական տեսակետից, վեր է հանում այն առանձնահատկությունները, որոնք նկատվում են աշխատության քարտեր բաժիններում և մասերում: Դրանք արդյունք են ոչ թե դիոնիսիոսյան ավանդույթների շարունակման, այլ նոր՝ լատինական քերականություններում սրելով և միաբարակալ կենտրոններում ժառանգված հիմունքների ճանաչման ու գործադրման:

Առանձին-առանձին քննության են առնվում Քոնեցու քերականության մեջ նկատելի գրեթե բոլոր կարգի երևույթները, դրանք արժեքավորվում են հայ քերականագիտության զարգացման դիրքերից: Նյութի քննությունը առաջ է քարվում հավասարի օրինակների և վաստերի մեջբերումով, դասակարգման մասշտաբի միջոցներով: Ըստ այդմ մեկընդմիջ պարզ ու հասկանալի է դառնում այն ամենը, ինչ հարկանշական է Քոնեցու քերականությանը: Ս. Ավագյանի ուսումնասիրությունը նպաստում է այդ քերականության լեզվական նյութի ճիշտ ու տեղին օգտագործմանը: Դա վերաբերում է հարկապես քերականական կորույթներին:

ԺԴ-ԺԸ դդ. լատինապիս քերականություններում հայերենի խոսքի մասերի քարտերակման պարմության և անդրադառնում Ն. Բարսեղյանն իր աշխատության մեջ²²: Այսպես քննվում է Նովիաննես Քոնեցու, Ֆր. Ռիվոլայի, Կդ. Գալանոսի, Ոսկան Երևանցու, Նովիաննես Կոստանդնուպոլսեցու, Միխիթար Մեբաստացու քերականություններում այս կամ այն չափով տեղ գրած համապատասխան նյութը (էջ 42-47, 67-81, 92-103): Նկարենք, որ աչքաթող է արված Խաչատուր Էրզրումեցու պարագան (գրված 1696 թ.): Բոլոր դեպքերում Ն. Բարսեղյանը կարարում է ոչ միայն ինքնուրույն դիտարկումներ, այլև մեծապես հաշվի է առնում նախորդների (հարկապես Գ. Ջահուկյանի) դիտողություններն ու գնահատությունները:

ԺԷ դ. քերականություններում երևան եկած նման տեղաշարժերի առանձին քննության և նվիրված Վ. Ծառուկյանի թեկնածուական ատենախոսությունը²³: Նեղինակը հան-

21 Տե՛ս Յովիաննես Քոնեցի, Յաղագս քերականին, բնագիրը հրապարակության պատրաստեց Լ. Ս. Խաչիկյանը, ներածությունը Լ. Ս. Խաչիկյանի և Ս. Ա. Ավագյանի, Եր., 1977, էջ 52-153:

22 Ն. Բարսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Եր., 1980:

23 Վ. Ծառուկյան, Գրաբարի կառուցվածքի ուսումնասիրությունը ԺԷ դարի քերականների աշխատություններում, թեկնածուական ատենախոսություն, ձեռագիր, Եր., 1969:

գամանորեն վերլուծում է այդ դարի քերականությունները, վեր հանում այն առանձնահատուկ ու նորը, որ առկա է դրանցում:

Նույն դարի գրաբարին է նվիրված Լ. Նովիանինյանի աշխատանքը²⁴, որում առանձին անդրադարձ կա լատինաբան հայերենին: Նեղինակն ավելի մանրամասն քննում է լեզվական այդ փոփոխության արտաքին կողմը, փայլա է նրա սեղմ բնութագիրը:

Լատինաբան նորամածությունները, որոնք գրաբարի համակարգ են թափանցում փոքրեր ժամանակներում՝ ԺԴ դ. 10-ական թթ. ի վեր, աստիճանաբար են լիովին հաղթահարվում են ԺԸ դարի սկզբներից մինչև դարի 80-ական թթ.: Այդ խնդրին անդրադարձել ենք մեր աշխատանքներից մի քանիսում, հատկապես ԺԸ-ԺԹ-դդ. գրաբարի պատմությանը նվիրված ուսումնասիրության մեջ²⁵:

24 Լ. Նովիանինյան, XVII դարի գրաբարը . «Լեզվի եւ ոճի հարցեր», Եր., 1983, էջ 116–196:

25 Վ. Նամբարձումյան, Գրաբարի լատինաբան նորամածությունների հաղթահարումը ԺԸ դարում. «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1982, 8, էջ 63–72: Նույնի, «Լատինաբան հայերենի փոփոխականից հայկականիչները» «Պատմա-բանասիրական հանդես», 2008, 1, էջ 159-179: Նույնի, «Գրական հայերենի հունաբան եւ լատինաբան փոփոխականների փոխհարաբերության հարցի շուրջ». «Լրաբեր հասարակական գիտությունների», 2008, 2, էջ 136-149: Նույնի, «Նկատառումներ լատինաբան հայերենի փոփոխականից հայկականիչների վերաբերյալ», «Ջանուկյանական ընթերցումներ-2008», Եր., 2008, էջ 98-106: Նույնի, «Գրաբարի գործառնությունը որպես գրական լեզու ԺԸ–ԺԹ դդ.», Եր., 1990: V. G. Hambartsumian, La periodisation de l'histoire de l'arménien latinise. – “Proceedings of the Fifth International Conference on Armenian Linguistics”, McGill University, Montreal, Quebec, Canada, May 1-5, 1995, “Caravan Books”, Delmar, New York, 1996, չգ. 375-380: